Ուր անցյալը ցավալի է: Ուր ապագան վիճահարույց է

Հաշվի առնելով, որ համաշխարհային երկու գերտերությունների առաջնորդների միջև առկա լարվածությունը շատ առումներով ավելի սուր է, քան կարող են պատկերացնել լրատվամիջոցները, Միացյալ Նահանգների և Ռուսաստանի միջև միասնության և համագործակցության օրինակ փնտրելը, թերևս, ապարդյուն է: Հետաքրքրական է, որ թշնամիների միջև միասնության այս օրինակը կարելի է գտնել նշված գերտերությունների հետ ամուր քաղաքական կապեր ունեցող երկու երկրներում: Հնարավոր է համարվում միայն հետևյալ տարբերակը. քանի որ Միացյալ Նահանգները և Ռուսաստանը հակադիր գերտերություններ են, աշխարհաքաղաքական առումով նրանց նշանակալի գործընկերները՝ Թուրքիան և Հայաստանը, պետք է որ ունենան նմանօրինակ հարաբերություններ: Հարևան երկրներ Հայաստանը և Թուրքիան արյունալի պատմություն ունեն, որը ազդեցություն է գործում ներկայիս հեռանկարների վրա և կարող է համարվել ավելի հզոր հուզական և քաղաքական պառակտման գործոն, քան այդ երկրների վերոնշյալ գործընկերները: Չնայած նրան, որ երկու երկրների միջև խորը անջրպետ է առաջացել, գունդուկծիկի նման բարդացած այս իրավիճակին թերևս, հնարավոր է լուծում տալ: Այդ լուծումը կարելի է գտնել Հայաստանում, որտեղ անցյալը ցավալի է, և որտեղ լուծումը կայանում է հենց այս ցավը դարմանելու մեջ: Խոսքը գնում է այսօրվա և վաղվա Հայաստանի մասին, որի տարածքից դուրս գտնվող Արարատ լեռը շարունակում է մնալ ազգային խորհրդանիշ: Գրեթե անհայտ և դեպի ծով ելք չունեցող այս փոքր երկրից դեպի արևմուտք գտնվում է պատմական թշնամին՝ ռազմական տերություն Թուրքիան: Հենց այդտեղ է գտնվում Հայաստանի վերոնշյալ ազգային խորհրդանիշ Արարատ լեռը: Այն փաստը, որ ազգային խորհրդանիշը գտնվում է պատմական ոխերիմ թշնամի համարվող երկրի տարածքում, ճակատագրի հեգնանքով հանդիսանում է դրական շարժիչ ուժ, որը կարող է հետագայում վերածվել այս երկու հարևան ազգերի հնարավոր միասնության խորհրդանիշի:

Ապագայում նման միասնությունը հնարավոր դարձնելու ուղղությամբ անդադար աշխատող «դարբնոցների» շարքում կենտրոնական դերակատարում ունեն Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (ՀՔԱՎ), որին կցանկանայի երախտագիտությունս հայտնել բյուրավոր գրավոր նյութերի պատրաստմամբ և խորհրդածություններով անցկացրած բազում անքուն գիշերների համար, և Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Ստամբուլի գրասենյակ, որը համառոտ կարելի է նկարագրել որպես հիմնականում երկրի ներսում մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություն: Այդուհանդերձ, թվում է, թե այս փոքր վիճահարույց կազմակերպությունները, որոնք երբեմն անգամ առաջ են բերում ոմանց ատելությունը, տեսնելով վիճահարույց և ատելությամբ լի իրավիճակը, որոշել են ամրապնդել իրենց դիրքերը՝ ստանձնելով ավելի մեծ դերակատարում, որը կարող է փարոս դառնալ միասական ապագա կերտելու ճանապարհին: Ձեռք ձեռքի տված՝ այս երկու կազմակերպությունները սկսել են միջոցառումներ կազմակերպել՝ կրճատելու երկու էթնիկ հարևանների համար թանկ նստած արյունալի պատմության անջրպետը. երկրներ, որոնք ավելի շատ նմանություններ ունեն, քան դրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր ընդունել մինչ այսօր: Ահա մեր անցած երկար ճանապարհի այս կետում մենք մոտենում ենք սառույցի բարակ շերտին: Տեղացիների և քաղաքական գործիչների կողմից բազում վիճահարույց կարծքների և քննադատության արժանանալով հանդերձ՝ ՀՔԱՎ-ը և ՀՔԱՍ-ը հնգօրյա ամառային ճամբարներ են կազմակերպել երկու երկրներում երիտասարդ և խոստումնալից ուսուցիչների համար՝ նպատակ ունենալով վերացնել խոչընդոտները և ամուր հասարակական հարաբերություններ հաստատել մասնակիցների միջև:

Այս վիճահարույց թեմայի շուրջ ՀՔԱՎ գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի հետ ունեցած զրույցի ընթացքում այս վտանգավոր և միաժամանակ առաջադիմական նախաձեռնության ներուժն արտահայտվում էր վստահ թեթևակի ժպիտով: ՀՔԱՎ գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը, մեղմ ժպտալով և ակնոցը աչքերից բարձրացնելով, մեծ կամեցողությամբ ներկայացրեց նախաձեռնության առավել արդյունավետ բաղադրիչները: Նախևառաջ, նա խոսեց մասնակիցների մասին, ովքեր գրեթե մեր տարիքի էին: Նա, մասնավորապես, կարևորեց այն ջերմ զգացումը, որն առաջանում էր նրանց մոտ, ովքեր տեսնում էին, թե ինչպիսի սրտաբացությամբ և պատրաստակամությամբ էին նրանք ծանոթանում հայ մասնակիցների հետ: Դա մեծամասամբ պայմանավորված էր թուրք մասնակիցների հետաքրքրասիրությամբ, որն ավելի մեծացավ, երբ նրանք

հասկացան, որ ավելի շատ տեղեկություններ էին գաղտնի պահվում նրանցից, քան նրանք պատկերացնում էին: Տվյալ դեպքում այս մարդկանց համար առավել մտահոգիչ էին ոչ թե նրանց իշխանությունների կողմից հաղորդած կեղծ տեղեկությունները, այլ՝ իրենց պատմության այն հատվածները, որոնք առհասարակ գաղտնի էին պահվում նրանցից, և որոնց մասին իմանալուց հետո զեկուցողներից մի քանիսը հույզերի պոռթկման ազդեցությամբ հայտարարել են, որ իրենք հանդիսանում են «մարդասպանների թոռները»:

Այսպիսով, նրանք բացահայտեցին, որ դավաճանությունը բնորոշ էր ոչ միայն հայերին, այլև՝ սովորական թուրք ժողովրդին: ՀՔԱՎ գրասենյակի նախագահ Սաքունցը, ձեռքը սրտին դնելով, շարունակեց՝ ասելով, որ «նրանք լավ մարդիկ են»՝ թեռնս, ակամա շեշտադրելով «մարդիկ» բառը: Այնուհետև նա դադար տվեց, դեմքի կիսաժպիտ արտահայտությամբ և սևեռուն հայացքով ներկաներին գամեց իրենց տեղերում՝ հետևելով, թե ինչպես է փոխվում զրուցակիցների դեմքերի արտահայտությունը այն ընթացքում, երբ նրանք սկսում էին հասկանալ այս փոքրիկ ծրագրի կարևորությունը:

Զրույցի այս պահին շեշտադրվել է ազգայնական հեռանկարի նկատմամբ մարդասիրականի առավելությունը: Առանց անդրադառնալու երկու երկրների բարդ և անորոշ քաղաքականությանը՝ ՀՔԱՎ գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը, հենվելով իր գրասեղանի մոտ դրված սև կաշվե աթոռին և հայացքն ուղղած առաստաղին, կրկին շեշտեց երկու կողմերից մասնակիցների ըմբռնողականության կարևորությունը. «Տեսնելով մասնակից երիտասարդներին՝ ես հասկացա, թե որքան լայնախոհ են նրանք: Նրանք որդեգրել են ավելի մարդասիրական մոտեցումներ»: Պարզաբանելով, որ այս ամենը հիմնականում հնարավոր է դարձել թուրքաբնակ հայ լրագրող Հրանտ Դինքի սպանությանը հաջորդած ուժեղ արձագանքի ազդեցության շնորհիվ՝ նա նշեց թուրք և հայ երիտասարդության վրա հոգեկան ազդեցություն գործող ավելի կարևոր հարցերը: Թոթվելով ուսերը՝ նա ասաց փաստերով խոսող մարդու հնչերանգով. «Հայ-թուրքական սահմանի բացումը երիտասարդների վրա կգործի հոգեկան, ինչպես նաև տնտեսական և քաղաքական ազդեցություն: Բացի այդ, հարկավոր է, որ նրանք առհասարակ շատ ժամանակ անցկացնեն միասին»: Խնդրի բարդության մասին վկայող փաստերի բերումով զրուցակիցները համաձայնության չեն եկել այն մասին, թե ի՞նչն է ավելի իրագործելի. բացե՞լ պետական սահմանները, թե՞ նպաստել, որպեսզի հայ և թուրք երիտասարդները պարզապես ավելի շատ ժամանակ անցկացնեն միմյանց հետ՝ հաշվի առնելով նրանցից շատերի համար ճամփորդելու հետ կապված դժվարությունները:

ՀՔԱՎ-ի խաղաղասիրական բաժնի համակարգող Արմինե Սադիկյանը նույնպես հույս է հայտնել նպատակների բարեհաջող իրագործման վերաբերյալ, թեև ավելի քննադատական կարծիք է արտահայտել իրագործման միջոցների վերաբերյալ և դիտարկումներ արել սփյուռքահայության դերի մասին: Ցավալի իրականությունը կայանում է նրանում, որ դպրոցները ֆինանսավորվում են պետության կողմից, և նման ֆինանսավորումն իր հետ բերում է որոշակի պահանջներ: Այն հարցին, թե, արդյոք դա կարող է բավականին մեծ ազդեցություն ունենալ մոտ ապագայում,

Սադիկյանը հաստատակամորեն պատասխանեց. «Ո՛չ, որովհետև ուսուցիչները վախենում են կորցնել իրենց աշխատանքը: Քանի որ կառավարության քարոզչությունն այդչափ ուժեղ է, վտանգավոր է անել թուրքամետ հայտարարություններ. այս ամենը դանդաղեցնում է առաջընթացը»: Այդուհանդերձ, ցավագին փաստն անմիջապես մեղմացվեց, երբ Սադիկյանը հայտնեց, որ մեծ հույսեր է կապում հեռավոր ապագայի հետ՝ ճակատագրի հեգնանքով հիմնավորելով դրանք պատմությամբ, ավելի ճիշտ՝ վերջին շրջանի պատմությամբ: Շատ թեթևակի անդրադարձ է կատարվում հայերի և թուրքերի ընդհանրություններին: Թեև շատերը

սովորաբար բացեիբաց խիստ զայրացած ժխտում են այս գաղափարը, այստեղ ու այնտեղ շշուկներ են լսվում հայերի և թուրքերի ընդհանրությունների մասին: Նման խոսակցությունները սկսվում են Թուրքիայում ապրող մարդկանց՝ նյութական առումով ավելի կայուն կյանքի մասին և աստիճանաբար առնչվում այդտեղ կողք կողքի ապրող և աշխատող թուրքերի և հայերի միասին տարբեր թեմաների հետ: Ի պատասխան այն հարցի, թե արդյոք դա կարող է ճշմարտանման լինել, Սադիկյանը ոգեշնչման աղբյուր համարեց դա՝ ասելով՝ «Սա ոչ միայն իմ կարծիքն է, սա իրականությունն է: Թուրքիայում աշխատում են շատ հայեր և անգամ փաստաթղթեր չունեցողները խնդիրների չեն բախվում: Ավելին, նրանցից շատերը հպարտ են Թուրքիայում աշխատելու համար և տնտեսական առաջընթաց են արձանագրել»: Այս առումով առկա է գաղափարական խնդիր, և Սադիկյանը քննադատական վերաբերմունք ունի նման գաղափարախոսության կրողների նկատմամբ:

Սադիկյանը ներկայացրեց խնդիրը, որի պատճառը, ըստ նրա, սփյուռքահայերից շատերի միակողմանի և «հետամնաց» մտածողությունն է. «Նախևառաջ, նրանցից շատերն անտեսում են շատ կարևոր խնդիրներ, օրինակ՝ մարդու իրավունքների խախտումները Հայաստանում, սակայն մի վայրկյան անգամ չեն հապաղի մեղադրել թուրքերին: Այդուհանդերձ, դժվար է ավելի հստակեցնել խնդիրը, քանի որ տարբեր վայրերում բնակվող սփյուռքահայերի մտածելակերպը տարբեր է»: Նմանօրինակ ոճով ՀՔԱՎ գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը նշել է Ռուսաստանի նկատմամբ հայերի կողմնապահության միտումը (միաժամանակ չանտեսելով հասարակության այն զանգվածը, որը քննադատում է Հայաստանում Ռուսաստանի բացասական ազդեցությունը): Սաքունցը նշել է, որ. «Թուրքիայում ապրում և աշխատում են շուրջ 100.000 հայեր, ում մասին Հայաստանում խոսում են միայն բացասական առումով: Թեև Ռուսաստանում ավելի շատ հայեր են սպանվում, քան Թուրքիայում, սակայն այդ մասին, թերևս, չի խոսվում: Իսկ եթե որևէ հայ մահանում է Թուրքիայում, այդ մասին խոսվում է անընդհատ»: Թեև նման տարերային թշնամանքը խորապես արմատավորված է և հասկանալի է,

Սաքունցը և Սադիկյանը վճռականորեն համոզված են, որ հայերի բարեկեցության հեռանկարների վերաբերյալ սփյուռքահայերի մոտեցումներն ավելի արդիական են և անկողմնակալ:

Խիստ անհավանական է, որ այս միջոցառումը վերածվի ազդեցիկ հասարակական շարժման, որը կարող է հանրության շրջանում սերմանել ավելի լավ ապագա կերտելու ինքնակատարելագործվող հեռանկարը: Իր ողջ նշանակությամբ հանդերձ՝ այն արտացոլում է ամբողջ պատմությանը, որը խիստ նրբին է և հուզիչ և թարմացնում է երկու կողների եռանդուն ազգայնական գաղափարախոսությունները կրողների գրեթե բոլոր վերքերը: Այդուհանդերձ, հարատև և ակնհայտ ճշմարտություն է, որ առաջընթաց արձանագրելու համար՝ հակադիր ուժերի միջև պետք է շփում հաստատվի: Թեև նման շփումն առկա է, հակադիր ուժերն այլևս անհնար է անվանումներով, մշակույթով կամ ազգային սահմաններով հստակ բնորոշել:

Արմեն Գրիգորյան